թէ ինչպէս Դաւիթ Անհողինի որդին Կիւրիկէն՝ Անիի Բարսեղ եպիսկոպոսին ՇԼ = 1131 թուին Աղուանից Յովսէփ կաթուղիկոսի ձեռքով կաթուղիկոս է ձեռնադրել տալիս Հաղբատում, իսկ իւր դրաներէց Սարգսին՝ Նորընծայ Բարսղի ձեռքով եպիսկոպոս նոյն վանքի (*)։ Սարգսի յաջորդն էր Գէորգ, ժամանակակից և թղթակից Ներսէս Շնորհալու 1158 թ. Նորա մահարձանը գտնւում է պարսպից դուրս դէպի արևելք՝ Անապատ կոչուած փոքրիկ եկեղեցու բակում. «Այս է հան|գիստ տն. Գե|որգա» արձանագրութեամբ (**)։ Սորա յաջորդն էր Բարսեղ Ա., (արձանագրութիւնների մէջ 1180, 1185 և 1189 թ. թ. յիշուած) ոչ միայն իւր գեղեցկութեամբ թամարա թագուհու մեծարանքին արժանացած, այլ և չինարար. Նորա ձեռքով «աւարտեցաւ» Մարիամ Բագրատունու իւր նախնեաց և ազգականների գերեզմանների վերայ կանգնած աղօթատունը ՈԼԴ = 1185 թուին, այն երեք առաջնակարգ գեղեցկութեամբ խաչերը, որ հաստատուած են այդ շէնքի արևելեան պատին, ապացոյց են, թէ քանդակագործութիւնը ինչպիսի՞ ազնուութեան էր հասած այդտեղ (պատկ. 10)։ Նա պատկանում էր Ուքանանց տոհմին, խնամութեամբ կապուած Կիւրիկեան տան հետ. Նորա ազգականները գեղարուեստական, չինարարական եւ այլ յիշատակներ ունին Հաղբատում ըստ արձանագրութիւնների (***)։ Սորա ժամանակ էր, որ Գրիգոր Տղան թղթակցութեամբ կամենում էր համոզել Հաղբատեցիներին և Սանահնեցիներին զիջող դիրք բռնել Միութեան խնդրի նկատմամբ եւ Լամբրոնեցին իւր զայրոյթն էր յայտնում առ Լեւոն գրած թղթի մէջ (*)։

Բարսղի յաջորդն էր Գրիգորիս, որին «սուրբ» տիտղոսն է տալիս Գանձակեցին (**), Զաքարիայի եւ Իւանէի ազգականը, մասնակից Լօռուայ ժողովին, հին աւանդութիւններին նախանձախնդիր եւ հակառակ նորամուծութիւնների, ինչպէս վրանի մէջ պատարագելն էր, որի առթիւ և բրածեծ անել տուաւ Կիլիկիայից եկած Մինաս եպիսկոպոսին և Նորա պաշտօնեաներին և զրկուեցաւ Հաղբատի առաջնորդութիւնից Զաքարիայի կողմից, Նորա փոխարէն Յովհաննէս Ա.-ին նշանակելով։ Յովհաննէս արդէն Գրիգորիսից առաջ կարճ ժամանակով Հաղբատի առաջնորդ էր եղած (***), բայց թողած և հեռացած էր իւր հայրենիքը՝ Խաչէն, ուր ՌԾԴ = 1204 թ. եկեղեցի է շինում և իւր եղբօրը Հասանին յանձնում, որ Դոփի ամուսինն էր, իսկ ՌԾԶ = 1207 թ. արդէն Հաղբատումն է (****)։ Այս Յովհաննէսն է մեր աւետարանի յիշատակարանի նոյնանուն «սրբասէր» իսկ ըստ Գանձակեցու «այր առաքինի» առաջնորդը, որի վերայ կարելի է իրաւամբ «մեծ չինարար» մականունն աւելացնել. «բազում գործս արժանի յիշատակաց գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհռչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողն» (*****)։ Արդ՞ւրև, Հաղբատի այս մեծ և հոյակապ գաւիթը հայ ճարտարապետութեան ամենափառաւոր կոթողներից մէկն է, իսկ գաւիթների ճարտարապետութեան մէջ առաջինը (պատկ. 11) (******)։ Նորա ժամանակի

(*) Ուռհայեցի. Էջմ. հրատ. 1898, 221։ Գանձ. Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1909, 91։ Ըստ Ուռհայեցու, Ստեփանոսն է Բարսեղին ձեռնադրողը։

(**) Ձեռ. Էջմ. N 1687. Նաեւ N 943 | 1525. «Թուզդ առ ի Ներսիսէ եղբաւրէ տն. Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, Պատասխանի Թղթոյն Գէորգայ արևելեան եպիսկոպոսի առաջնորդի սուրբ ուխտին Հաղբատայ, յաղագս հետազաւտելոյ առ ի ստուգութիւն զպատմութի. երանելոյ նահատակին Սարգսի զաւրավարի մեծի»։

(***) Տես Երզնկեան, 57-58. 25 (կասկածելի ընթերցմամբ)։

(*) Ընդհանրական Ներսիսի Շնորհալւոյ Էջմ. հրատ. 1865, 426, 433. Լամբրոնացու թուղթը՝ «Առ քրիստոսազօր իշխանն մեր ինքնակալութեամբ՝ Լեւոն»։ Գրիգոր Տղայի թղթերի հետ. Վենետիկ, 1865։

(**) Գանձ. Ղուկ. հրատ. 92, 161-164։

(***) Երզնկեան, 24։

(****) Բարխուդարեան. Արցախ, Բագու. 1895. 154։ Ձեռ. Էջմ. N 203|194, 254։

(*****) Գանձ. 164, տ. և 92։

(******) Մեր նկատողութեան տետրակից մէջ ենք բերում առաջին տպաւորութեան տակ ապրած յուզման եւ մտքերի նկարագրութիւնը. «Այսօր (1925, 26 Օգ.) մեծ ժամատանն էի աշխատում, մեծ և բարձր վայելքի բոպէներ ունեցայ այս հոյակապ շէնքի աւելի մանրամասն դիտողու-